

Գիւ անուշ եւ քանց եղունիկ (աղաւնի),
 Այ խօրօտիկ խօրօտիկ,
 Այ սիրունիկ կեաքեաւելի:
 Երբ կեաքեաւելին ծառին կ'իջնի,
 Իր քաղցր ձէնով ճըլճըլ կ'անի,
 Աշխարհս ըմէն (աւեկն) զըւարթ կ'անի,
 Արուն ծովէն սիրա կը հանի,
 Այ խօրօտիկ խօրօտիկ,
 Այ սիրունիկ կեաքեաւելի:
 Հաւերն ամեն քերնեկ (քեզի երանի) կու տան.
 Հեա քե կիւզան շարան շարան (կարգ կարգ
 շարուած),
 Քեա շուրջ եկած կը ճըլճըլան,
 Ըսկէ չիկայ քեզի նման.
 Այ խօրօտիկ խօրօտիկ
 Այ աղուորիկ կեաքեաւելի:

Կարաւին բնութիւնը կը սիրէ կայծել, պարել, խայտալ, կարաւել, որով և կարաւ կոչել են զայն նախնիք՝ իբրև կարաւող. յուսամբ մեր այս առած ստուգարանութեան ուղիղ լինելուն հակառակող մի սիրտի չունենամք, ինչպէս ունեցանք Ծիծ-աւն բառի մասին, թէ և մի զօրաւոր կամ անզօր ապացոյց մի ժխտողին բերնէն կամ զըչէն առած չեմք: Բաւ է, չի թափառինք լեզուաբանական խնդրոց և վիճաբանութեանց մէջ, զորա շոր են և մարդուս ուղեղը կը չորցընեն. անցնինք մեր աշխուժ և անուշ հաւերուն: Ահաւասիկ Լորամարզն, բռնեմք զայն. անդէն ձրուորնիս կ'այրի, սաստիկ է զորա կենդանական ջերմութեան աստիճանն, և բովանդակ թռչնոց զասուն մէջ չի կայ քան զայս աւելի տաքուկ հաւ մի. և աստի Գաղղիացոց մէջ առակի անցած է և կ'ըսեն, «*Chaud comme une caïlle*». Սա այլ կարաւու նման կը սիրէ մեր աշխարհը, և իւր միօրինակ երգերն կը հնչէ Մշոյ, Բաղիշու, Կարնոյ, Երևանայ, Կիլիկիոյ, Արցախու և Պանոսի խուլ զաշտերէն և անտառներէն:

Ուխտիս ներհուն աշխարհագիր վարդ. Ղ. Ինճիճեան, մեր երկրի բնաշխարհիկ կը հա-

մարի լորանման ուրիշ հաւ մի և կը գրէ «*Թուք գուշի ի կամախ, նման Լորոյ: Ճոր շոր փոքր քան զլոր, այլ և ըստ զունոյ նման նմա. ունի բնութիւն իմն մասնաւոր, զի ի ձգել քարի ի վերայ նորա, նախ կծկի, և յետ անկանելոյ քարին ի գետին, ապա թռուցեալ փախչի*»: Այսկից զատ նոյն հեղինակը ուրիշ լորանման հաւ մ'այլ կը յիշէ՝ «*Կիւկիւ, ուրեք ուրեք Կոչեն Կիւիւ կամ Կիւ, մեծ քան զլոր, զունով նման նմա. զնայ ի վերայ ջուրց և լողայ, և առ ջրովք զնէ զիւր բոյն*»*: Կենդանաբանօրէն առ այժմ մեծարգոյ հեղինակին այս հաւերն չենք կրնար գտաւորել կարաւու կամ լորամարզի տեսակին մէջ, քանի որ աչօք չեմք տեսած և չունիմք տեղեկութիւն եւրոպացի ուսումնական ճանապարհորդներէն:

Այնքան առաւ են ի Հայս կարաւք որ եւրոպացի ճանապարհորդաց ամենօրեայ կեր կը լինին ինչպէս կը գրէ ճանապարհորդ մը, «*Patridges are to be found everywhere. The Koordish peasants and my soldiers were in the habit of providing my table every day with this delicacy*»*:

Ինճիճեան՝ հասարակ կարաւէն զատ կը յիշատակէ՝ լինել ի Հայս և աւելի ի Կարին՝ վայրի տեսակն այլ, «*Կարաւ ընտանի՝ որ է մոխրագոյն և կտուցն կարմիր. նաև կարաւ վայրի, զոր Զիւ Գեքլիկ կոչեն աճ, կարմրագոյն և սպիտականիլ*»***:

— Վիթալ Քինէ մեր երկրի ուրիշ բնաշխարհիկ կարաւ մ'այլ կը յիշէ, որ է Սալամբն. եւրոպացի ճանապարհորդն ասոր մին համեղաճաշակ լինելն յայտնապէս շատ կը գովէ: Ամենէն շատ Կիլիկիոյ կողմերն կը գտնուի:

Պարկեշտութեամբ մօտենանք յանկարծակի առջևնիս ելած հաւին. աւաղ, դա իւր զիւթի զեղեցկութեամբ ոչ միայն մեր աչերն, այլ և միտքն շլացընելով՝ անկարող պիտի լինիմք ըստ պատշաճի նկարագրել զայն.

* Vital Guinet իւր Վանայ տեղագրութեան մէջ կը յիշէ լինել բազմաթիւ կարաւներ մանաւանդ (our keklik) կոչուած տեսակն:

* Ինճիճեան. Նոր Հայաստան, էջ 43:
 ** N. Millingen. էջ 166:
 *** Ինճիճեան. Նոր Հայաստան էջ 67: